

«Վավերացնում են»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
24 հուլիսի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2006 թվականի N 982-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴՍՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՊԱՅԱԿԱՆ, ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԵՎ
ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ՝ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ
ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական
ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ
կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության
կառավարությունը *որոշում է*.

1. Սահմանել՝

ա) նախկինում կենսաթոշակի անցած Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության
ուստիկանության սպայական, ենթասպայական և շարքային կազմի՝ զինծառայողների
և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակները վերահաշվարկվում են՝ հիմք
ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 1999 թվականի ապրիլի 16-
ի N 226 որոշմամբ սահմանված պաշտոնային դրույքաչափերը.

բ) նախկինում կենսաթոշակի անցած Հայաստանի Հանրապետության
տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայության
սպայական և ենթասպայական կազմի՝ զինծառայողների և նրանց ընտանիքների
անդամների կենսաթոշակները վերահաշվարկվում են՝ հիմք ընդունելով Հայաստանի

Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2323-Ն որոշմամբ սահմանված պաշտոնային դրույքաչափերը.

զ) նախկինում կենսաթոշակի անցած Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության քրեակատարողական ծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակները վերահաշվարկվում են՝ հիմք ընդունելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի N 2104-Ն որոշմամբ սահմանված կոչման համար տրվող և պաշտոնային դրույքաչափերը.

դ) 2006 թվականի հուլիսի 1-ից Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից նախկին Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հրշեջ պահպանության վարչության աշխատողներին «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կենսաթոշակների վճարումը՝ համապատասխան ընթացակարգով, իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունը.

ե) 2006 թվականի հուլիսի 1-ից Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից նախկին քրեական պատիժների իրականացման վարչության աշխատողներին «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կենսաթոշակների վճարումը՝ համապատասխան ընթացակարգով, իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունը:

2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայության տնօրենին և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետին՝ սույն որոշման 1-ին կետի «դ» և «ե» ենթակետերի պահանջների կատարումն ապահովելու նպատակով մեկամսյա ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից զինծառայողների կենսաթոշակների գործերի հանձնման-ընդունման և վերահաշվարկման աշխատանքների կատարումը:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշման 1-ին կետի «դ» և «ե» ենթակետերի պահանջների կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունից, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից և Հայաստանի Հանրապետության

կառավարությանն առնթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից համապատասխան հաշվարկներն ստանալուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2006 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2006 թ. հուլիսի 14
Երևան